Ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող ուսումնական հաստատությունների ընտրության բաց մրցույթի հայտարարություն

Դարձի՛ր «ԱԲ սերունդ» ծրագրի դպրոց

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ հայտարարում են **բաց մրցույթ** հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ միանալու և փորձարկելու **«ԱԲ սերունդ» դպրոցական երաշխավորված ծրագիրը**:

«ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի նպատակներն են.

- ձևավորել խորացված մաթեմատիկայի և համակարգչային գիտության հիմքային գիտելիքներ և հմտություններ՝ անհրաժեշտ ԱԲ ոլորտի համար,
- բացահայտել ԱԲ և ԳՏՃՄ ուղղությամբ գիտնականի և նորարարի հեռանկարները,
- տրամադրել ԱԲ ոլորտի կիրառական գիտելիքներ և հմտություններ:

Այս եռամյա կրթական ծրագիրը նախատեսված է ավագ դպրոցի 10-ից 12-րդ դասարանների աշակերտների համար և հնարավորություն կընձեռի նրանց.

- սովորել խորացված մաթեմատիկա, ծրագրավորում (Python), արհեստական բանականության հիմունքներ,
- իրականացնել պրակտիկ նախագծեր ԱԲ ոլորտում,
- ստանալ անհրաժեշտ հմտություններ ու մասնագիտական կողմնորոշում ԱԲ հետազոտողի ու նորարարի մասնագիտության հանդեպ հետաքրքրության բարձրացման և այս ուղղությամբ հետագա կրթությունը շարունակելու համար:

2023-2024 թթ. ուսումնական տարվանից ծրագիրը փորձարարական ձևաչափով կներդրվի Երևանի և ՀՀ մարզերի 10 ավագ դպրոցներում:

Ծրագրի փորձարկման համար կարող են դիմել Երևանի և ՀՀ մարզերի բոլոր այն դպրոցները, որոնք բավարարում են հետևյալ պահանջները.

- ունեն ավագ դպրոցի բաղադրիչ,
- ունեն կամ կարող են ձևավորել խորացված մաթեմատիկայի ուսուցմամբ

աշակերտների խումբ,
- որպես օտար լեզու դասավանդվում է անգլերենը,
- համապատասխան ուսուցչական և վարչական կազմ կամ ներգրավման հնարավորություն,
- ունեն անհրաժեշտ տարածքային ռեսուրսներ և տեխնիկական հագեցվածություն,
- ծրագիրն իրականացնելու պատրաստակամություն և աջակցություն:

Ծրագրի մանարամասներին և դպրոցների ընտրության պահանջներին կարող եք ծանոթանալ՝ ուսումնասիրելով **տեղեկատվական գրքույկը** և մասնակցելով առցանց տեղեկատվական հանդիպումներին, որոնք տեղի կունենան հետևյալ օրերին.

- **հունիսի 19՝ ժամը 15:00** (հանդիպման հղում)
- **հունիսի 22՝ ժամը 15:00** (հանդիպման հղում)
- **հունիսի 26՝ ժամը 15:00** (հանդիպման հղում)

Ծրագրի միանալու համար խնդրում ենք լրացնել հետևյալ **հայտադիմումը:**
Ծրագրին դիմելու վերջնաժամկետն է **2023 թ.-ի հունիսի 30-ը:**

Հարցերի դեպքում կարող եք դիմել FAST հիմնադրամի Կրթական ծրագրերի բաժին՝ գրելով նամակ **education@fast.foundation** էլ.փոստի հասցեին կամ զանգահարելով +374 43 75 57 54 հեռախոսահամարով:

Ծրագրի մանրամասներին և զարգացումներին ծանոթացեք «ԱԲ սերունդ» կրթական ծրագրի **Ֆեյսբուքյան էջից:**